ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Հիմք ընդունելով Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասը, առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Սահմանադրական օրենքի 149-րդ հոդվածով՝

Ալեն Սիմոնյանին հետ կանչել Ազգային ժողովի նախագահի պաշտոնից:

Հիմնավորում

«Ալեն Սիմոնյանին Ազգային ժողովի նախագահի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ» Ազգային ժողովի որոշման նախագծի

Սահմանադրությամբ, որպես պետական կառավարման համակարգի մոդել, Հայաստանի Հանրապետությունում ընտրված է խորհրդարանական կառավարումը: Ազգային ժողովը՝ ժողովրդի բարձրագույն, միակ ներկայացուցչական մարմինն է: Սահմանադրության 104-րդ 2-րդ մասը սահմանում է, որ «Ազգային ժողովի նախագահը **ներկայացնում է Ազգային ժողովը** և **ապահովում նրա բնականոն գործունեությունը**:»: Սահմանադիրը առանցքային երկու գործառույթ է նախատեսել նման պաշտոն զբաղեցնող անձի համար:

Այսինքն Ազգային ժողովի նախագահը ի պաշտոնե Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների կողմից ուղղակի ընտրությունների միջոցով ձևավորված, առաջնային մանդատ կրող միակ ներկայացուցչական մարմնի **փաստացի ղեկավարն է**, հետևաբար նրա կողմից արված ցանկացած հայտարարություն պետք է լինի խիստ կշռադատված, լինի բարձր կարգավիճակին համապատասխան, չխախտի Սահմանադրությունը և ներպետական օրենսդրությունը, չառաջացնի խնդիրներ Հայաստանի Հանրապետության պետականության համար:

Նման պայմաններում, ընդգծելով Ազգային Ժողովի նախագահի պաշտոնի բարձր դիրքը և կարևորությունը, հարկ է արձանագրել, որ ԱԺ նախագահի պաշտոնը փաստացի զբաղեցնող[1] Ալեն Սիմոնյանի հայտարարություններն ու վարքագիծն

---

[1] *Նման եզրույթ օգտագործվում է հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանը վարույթ է ընդունել և քննության է առել ՀՀ ԱԺՈ-01-Ա որոշման սահմանադրականության հարցը (ՍԴԱՈ-183), որի պայմաններում ՀՀ ԱԺ պատգամավոր Ալեն Սիմոնյանի, որպես ԱԺ նախագահ ընտրվելու փաստը կարող է ճանաչվել Սահմանադրությանը հակասող և անվավեր, ի թիվս այլի հաշվի առնելով, որ ԱԺ պատգամավորներ Մխիթար Հաքարյանը և Արթուր Սարգսյանը ապօրինաբար չեն մասնակցել (զրկված են եղել) այդ գործընթացին թեև առաջադրված են եղել որպես ԱԺ նախագահի թեկնածուներ:*

ուղղակիորեն ազդում են Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության, ինչպես նաև՝ արտաքին և ներքին անվտանգության վրա, իսկ որոշ դեպքերում պարունակում են անձանց պատիվը և արժանապատվությունը նսեմացնող և անմեղության կանխավարկածը ակնհայտ խախտող դրսևորումներ: Մանավորապես.

1. Ալեն Սիմոնյանը արտահայտել է Ադրբեջանի Հանրապետությունում՝ միջազգային իրավական փաստաթղթերին ուղղակի հակասող և ապօրինաբար պահվող հայ գերիների վերաբերյալ դիրքորոշում, որը ոչ միայն խախտում է գերեվարված անձանց անմեղության կանխավարկածը, պատճառում հոգեկան տառապանքներ վերջիններիս հարազատներին և մտերիմներին, այլև նսեմացնում է նրանց պատիվն ու արժանապատվությունը, ՀՀ զինված ուժերում պետության նկատմամբ սերմանում անվստահություն՝ դրանով իսկ ուղղակի վնաս հասցնելով ՀՀ պաշտպանունակությանը: Ցանկացած պաշտոնատար անձի, առավել ևս ԱԺ նախագահի պաշտոնը փաստացի զբաղեցնող անձի կողմից նման վարքագիծը անընդունելի է և ակնհայտորեն չի նպաստում Ազգային ժողովի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը:

2. Ալեն Սիմոնյանի առանձին հայտարարություններ հարիր չեն իր զբաղեցրած բարձր դիրքին և առաջացնում են դրանից բխող ռիսկեր ՀՀ արտաքին հարաբերությունների ոլորտում:

3. Ալեն Սիմոնյանի կողմից 2021 թվականի օգոստոսի 2-ից մինչ օրս պարբերաբար խաթարվում է Ազգային ժողովի բնականոն գործունեությունը (անհարկի միջամտություն է կատարվում ընդդիմադիր պատգամավորների ելույթներին, կողմնակալ մեկնաբանվում և անհարկի գործադրվում են կարգապահական պատասխանատվության միջոցներ, սահմանափակվում են ընդդիմադիր պատգամավորների և խմբակցությունների իրավունքները և այլն): Այս վարքագիծը

ոչ միայն նսեմացնում է պետության բարձրագույն ներկայացուցչական մարմնի դերը, այլ նաև ուղղակի հարված է ներկայացուցչական ժողովրդավարության արժեքներին:

Հարկ է փաստել նաև, որ բավարար գործողություններ չեն ձեռնարկվել՝ ապահովելու միջազգային պատվիրակություններում ընդդիմադիր պատգամավորների անխոչընդոտ մասնակցությունը:

4. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1619 որոշմամբ հաստատվեց, որ Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Չարչյանը, Արթուր Սարգսյանը և Մխիթար Զաքարյանը 8-րդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստի օրվանից գտնվել են ապօրինի անազատության մեջ և չեն կարողացել իրացնել Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պատգամավորական իրենց լիազորությունները: Այն դեպքում, երբ պատգամավորների անխոչընդոտ մասնակցությունը Ազգային ժողովի աշխատանքներին համարվում է վերջինիս բնականոն գործունեության մաս, որի ապահովման պարտականությունը Ազգային ժողովի նախագահինն է: Մինչդեռ Ալեն Սիմոնյանը այս հարցում ևս ցուցաբերել է բացարձակ անգործություն:

5. Բացի այդ, Ալեն Սիմոնյանի որպես ԱԺ պատգամավորի և ԱԺ նախագահի պաշտոնը փաստացի զբաղեցնողի վարքագիծը ինքնին խնդրահարույց է նաև պատգամավորական վարքականոնի տեսանկյունից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

10.12.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով, 99-րդ հոդվածով, 149-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցությունը

Որոշեց՝

1. Հավանություն տալ «Ալեն Սիմոնյանին Ազգային Ժողովի նախագահի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ» Ազգային ժողովի որոշման նախագծին և այն ներկայացնել Ազգային ժողովի քննարկմանը:
2. Հիմնական զեկուցող նշանակել «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Ղազինյանին:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

10.12.2021թ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հիմք ընդունելով Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասը և առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով, 99-րդ հոդվածով, 149-րդ հոդվածի 1-ին մասով՝ ներկայացնում եմ «Ալեն Սիմոնյանին Ազգային ժողովի նախագահի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ» Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ օրենքով սահմանված կարգով այն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու համար :

Կից ներկայացվում են՝

1. «Հայաստան» խմբակցության որոշումը՝ «Ալեն Սիմոնյանին Ազգային Ժողովի նախագահի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագծին հավանություն տալու մասին»:
2. «Ալեն Սիմոնյանին Ազգային Ժողովի նախագահի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ» Ազգային Ժողովի որոշման նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը (հիմնական զեկուցող՝ պատգամավոր Արթուր Ղազինյան):

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ